

## ԳՐԱԽՕՍԱԿԱՆ—ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

## « Ե Լ Ք Ի Լ Ե Ռ Ը »

(ԼԵՒՈՆ ՇԱՆՔ—ԿԱՅԱՐ. ՂՐԱՄԱ—ԲԻԼՊԱՆՈՎԱՆ  
ԿԱՆ ՂԱՐԵՐԷՆ. ԹԻՖԼ. 1916 թ. 96 եր. գ. 1 ռ.)

Սեանի կղզուց այս անգամ մեզ Բիլզանդական կայսերութեան ճոխութեան, երկրային գուարճութեան լիառատ կենդրոն Պօլիսն է տեղափոխում «Հին Աստուածների» շնորհալի հեղինակը. կարծես երկու ծայրահեղութիւնները՝ անապատ և կեանք դէմ առ դէմ բերելու ու նոյն միութեան երկու հակադիր կողմերը համեմատել տալով ամբողջի պատկերը լրացնելու:

Աշխարհի ունայնութիւնը դաւանողների, հոգու կատարելութեան իւրայատուկ հասկացողութեան ջատագովների դէմ այժմ կանգնած են փառքի, ոյժի՝ ճոխութեան-զեղխութեան ներկայացուցիչները և իրենց խօսքն են ասում մեզ. խօսք, որը տարօրինակ է հնչում, որը Հին Աստուածների վախճանական գաղափարի մի այլ տարբերակն է միայն ասուած այս անգամ ոչ վեղարաւորի, այլ արքայական թագի ու գայիստնի տիրոջ կողմից:

Հայ թատրոնական կեանքում առանձնակի ուշադրութեան, քննութեան առարկայ դարձած «Հին Աստուածները» չափազանց շատ է կարգացուել, խօսակցութեան նիւթ դարձել, որ հեշտ մոռացուի և այժմ, նոյն հեղինակի «Կայսր»-ը կարգալով ակամայից համեմատութիւն է սկսում մարդ, բայց ոչ ակամայ նմանութիւններ գտնում,

Արդէն իւրայատուկ գրութեան ձև ճկուն ու սահուն, գողտրիկ համեմատութիւններով զրելու ոճ մշակած հեղինակի նոյն ոճը և այս դրամայում տեսնելուց զատ՝ տեսարանների նմանութիւնն անգամ կարելի է տեսնել երկու յորուածքներում. երկու տեղում էլ յաջող գործադրած, երկու ղեկավարում էլ հեղինակի հոգեբանական վիճակը ինքնամշակ ձևով արտայայտելու շնորհքը ցոյց տուած: Առէք «Կայսր»-ի Բ. արարի Բ. տեսարանի 3 պատկերը, երբ Կայսրը և Ջայնն են խօսում, համեմատեցէք Հին Աստուածների վանահօր և ճերմակաւորի խօսակցութեան տեսարանի հետ, երկու ղեկավարում էլ խղճի ձայնի առարկայական արտայայտութիւնն է թէև ըստ իս Հին Աստուածներում այդ աւելի յաջող ու նրբին, բնական է. կամ «Կայսր»-ի Ա. արարի Բ. տեսարանը երբ կուգ պառան է բնորոշում պալատական կանանց, նրանցից



ամեն մէկին մի կուգ—արատ—թերութիւն վերագրելով և բանալով և յիշեցէք «Հին Աստուածներ»-ի այն տեսարանը. երբ վանականները ժողովուած խօսում են և ամեն մէկը իր յատկութիւնն է պարզում, մէկը գինեմոլ, միւսը որկրամոլ, երրորդ կանանց մտապատկերներով տարուած. երկու դէպքում էլ տարբեր խմբակցութիւնների բնորոշ թերութիւնները հակիրճ, խրատական—գուարձալի ձևով արտայայտուած:

Կամ օվ է Օհան Գուրգէնը իր անվերջ ձգտումներով, դէպի վեր «մինչև անհաս տենչանքները, մինչև մահու սահմանները» (94 եր.) եթէ ոչ նոյն վանահայրը, որը յաւէտ քրանդել ու շինելու մէջ է որոնում իր կեանքի նպատակը, որը՝ բարձունքէ բարձունք է անցնում, դարձեալ դէպի վեր:

Նմանութիւնները բաւականին են և երբեմն կարծես նոյն «Հին Աստուածներն» են կարդում տարբեր գործող անձինքներով միայն:

Եւ այս նմանութիւնները ըստ իս առաջ է գալիս յատկապէս նրանից, որ այստեղ էլ Ժ. դարու դէպքերը իր գրչի նիւթ դարձնող հեղինակը նոյն միտքն է արտայայտում, տարբեր տարազի, տարբեր միջավայրի մէջ ապրող, տարբեր ձգտումներով տոգորուած մարդկանց բերանով:

Արդեօք պատահականութիւն է, որ հեղինակը երկու գրուածքում էլ կեանքի ունայնութեան պատկերն է նկարում գունեղ, տպաւորիչ ձևով, յատկապէս պատմութեան Ժ—րդ դարը ընտրելով իր զրամանների նիւթ, երբ Փրկչի երկրորդ դալստեան սպասումով բռնուած էր ժամանակի քրիստոնեայ աշխարհը և բնականաբար կեանքը, աշխարհային մտքով ասած, դատարկութիւն, ունայնութիւն էր համարում:

Ըստ իս սա լոկ պատահականութիւն է և յօգուտ հեղինակի խօսող, որ նիւթը ժամանակի ոգուն հարադատ գոյնով է տրւում, աւելի շուտ գրողը կարծես իր խել փրկիստփայական աշխարհայեացքն է արտայայտում մէկ վիզարաւորի, մէկ արքայական թագաւորի բերանով, երկու դէպքում էլ նոյն միտքը, նոյն թափով, նոյն տրամաբանութեան ուժեղ նախադրեալներով հաստատուած:

Եթէ Սևանի մենաստանում իր համար տաճար հիմնող, հինը քանդող ու նորը շինող Վանահայրը, այդ աննկուն կամքի տէր գաղափարի մոլեռանդ հետևողը վերջ ի վերջոյ միայն քանդելու շինելու մէջ է որոնում իւր կեանքի նպատակը, ապա հասարակ զինուորի աստիճանից Բիւզանդական կայսերութեան զահը բարձրացող Օհան Գուրգէնը հազիւ զահի տիրանալուց յետոյ դարձեալ «անյադ հոգու, անզուսպ թևաւոր ձգտումները» ետևից է գնում ու զահը թողնում ներքինուն, որ ինքը բարձրանայ նորից «Ելքի լեռը, կուխ» (95).



Երկուսն էլ անհանգիստ հոգիներ, երկուսն էլ տենչանքների յաւիտեանական տենչով բռնուած մղուած են յառաջ ու յառաջ, «Ելքի լեռը» նրանց համար կէտ նպատակի է. շատ է այդ լեռների թիւը, անվերջ, անհամար ու իրենք գիտենալով հանդերձ կարծես աւելի շուտ բնազդօրէն, իրենց խառնուածքից դրդուած մղուած են նորանոր Ելքերի, որ դառնութեամբ ասեն «Յաղթանակը ակընթարթմուն է, իսկոյն կցնդի ու կիյնու աչքէդ հմայքին կապը: Իսկ բաց աչքերը կտեսնեն միայն մեր խեղճութիւնը: Կը տեսնեն, թէ ինչքան ողորմելի ու չնչին բան է եղեր, որուն համար դուն կուեր ես, կտեսնեն՝ թէ ինչքան գոհելի ու թշուառ բան է եղեր հենց ինքը կռիւը, որ դուն կուեր ես» (38 եր.):

Ու այս ասողը ինքը անդուպ տենչերի, անվերջ կռիւների լեփ լեցուն շաւմարան Օհան Գուրգէնն է, և այդ հասկանալի է: Շրջապատողների միջակութիւնների, կեանքի վրայից սահող անցնողների, աղուէսների ստուերներում պաշտպանուելը, առիւծի կեր դառնալուց գերադասողների համար Օհան Գուրգէնների, վանահայրերի պայքարները անմոռաց են ու դրանք «անմահ կղաւնան» (32). բայց այդ «անմահների» համար իբր դրանք դատարկութիւններ են, որովհետեւ «դարերը, պատմութիւնը» (32 եր.) դրանց չեն հիւրասիրում. որովհետեւ դրանց հոգին խիստ է պահանջկոտ և «ամեն փառք ու ամեն գործ ստեղծուած է միայն օրւան մը համար» (33):

Դրանք այն հոգիները չեն, որոնք իրենց ոյժերի առանձնագոյնը լարելով հազիւ մի նպատակի հասնելուց յետոյ իրենց գլխի տակ բարձ գնելու հանգիստ նստելու և պարտականութիւնը սրբութեամբ կատարելու գիտակցութեամբ հրճւելու, այլ ևս գործ շանելու սկզբունքով են տարուած:

Դրանց համար կեանքում կատարուող ամեն ինչը խաղ է և «Դրաւիչ են միայն այն խաղերը, որուն վրա մարդ իր կեանքն ու մահը կդնէ»: Դրանք միայն «խաղեր» են անում ամենամեծ, վտանգաւոր գործն անգամ կատարելիս, որովհետեւ «Ըսէ, խնդրեմ, ի՞նչ հրապոյր, ի՞նչ իմաստ կը մնա կեանքին մէջ, եթէ հանես մէջ տեղէն այդ խաղը, եթէ հանես կեանքին մէջէն կեանքին, բաղդին ու աշխարհին հետ խաղալը» (33 եր.):

Զպէտք է կարծել, որ սրանք «խաղ» ասելով հասկանում են թեթեւ, անտարբեր վերաբերմունք դէպի կեանքը. ընդհակառակը սրանք են որ ամենից աւելի լուրջ, մտածուած են գործում, ամենից աւելի աշխատանք են թափում ու հոգու ողջ թափովը գոհաբերութեան դիմում, բայց ամենամեծ գործն անգամ կեանքի մէջ դրանց համար «խաղ է» — չի բաւարարում դրանց հոգուն, կեանքը շատ է խեղճ, շատ է աղքատ, դժգոյն դրանց բաւարա-



ըելու, դրանց գրաւելու համար, այդ պատճառով այդ հզօր, կորովի հոգիների համար կեանքի բոլոր երևոյթները «խաղի» արժէք ունի միայն: Այդպիսիները մեր շրջապատի կեանքով չքաւակաւանացողներն են և դրանք հազուադէպ են «կեանքի մարդիկ» չեն, այս խօսքի սովորական, ընդհանրացած մտքով:

Անապատում (Սևան), թէ յղիութեան Բիւզանդական շաշ-տութեան մէջ, որ այնքան նրբին նկարագրել է հեղինակը այս նոր երկում, այդ հոգիները առանձնայատուկ կեանք են վարում ու դրանց համար կինը դրամաների մեծ կեդրոնը միայն այնքան գրաւիչ, թե տուող, ոգևորող է, որքան նա դեռ հեռու է: Վանահայրն ու Օհան Գուրգէնը վերջի վերջոյ «նլքի լեռներ»-ի ճամբան են բռնում, երբ կնոջ հմայքից մի բոպէ տարուելուց յետոյ սթափւում, հեռանում են, թողնում են, որ կինը հեռում մնայ ու միայն յիշողութեան մէջ ապրելով, աշխատէ: Կինն ինքն էլ զգում է այդ դրութիւնը ու պատահում է դէպք, թէ և շատ, շատ հազիւ, որ մերժում է տղամարդու կին դառնալը, որովհետեւ նա գիտէ, որ այդպիսին «ստեղծուած է տիրելու համար»,... ստեղծուած է ստեղծելու համար» (67 եր.) իսկ երբ կինը դառնայ այդպիսի մարդու, վերջինս չդադարէ ստեղծելուց, «Պէտք է, որ դուն անգամը գոնէ տենչաս ու չունենաս, ձգտիս ու չհասնիս, ծարաւիս ու չյագնես...» «... որ չըսես՝ «Ինչո՞ւ համար», որ չխորհիս, թէ խեղճ բան է այս բոլորը և չի արժեր ուզենալ» (70 եր.):

Կնոջ կողմից այս մի մեծ գոհարեութիւն է, նման հոգիների համար, կինն այս դէպքում զգում է, որ իրօք կեանքի մէջ ստեղծողները, շինողները դրանք են, որ կեանքի մեծ բեռը դրանց հուժկու ուսերին է դրւում, որ դրանք են հարթում բաղդաւորութեան ուղին, դրանք են խաչը կրողները:

Բայց ի՞նչ է ասում դրանց կեանքն ինքը. այն կեանքը, որը վայելք է «կեանքի մարդկանց», որը իւր հաճոյքի լայն սեղանն է բացում իրենից «օգտուողներ»-ի, բայց ոչ իւր դէմ մաքաւողների համար:

Այդ պատասխանը շատ կծու, շատ դառն է, դա մի հեզմանք է այնպիսի հոգիների հասցէի, մի խիստ հեզմանք: Կեանքի դաւալ է Վասիլ Լեկապէնը այդ ներքինին, որը իւրայատուկ այն փիլիսոփայութիւնն ունի, թէ «մարդ ըլլալու համար, նախ պէտք է դադրեն արու ըլլալէ» (50 եր.) որի համար պայքար կուի չկայ, որը «որովայնի իմաստուն խիթեր» (86 եր.) ունենալով պալատի տէր է դառնում, Օհան Գուրգէնի Կայսր դառնալուց, երբ վերջինս կնոջը՝ Թէօֆանօյին հեռացնում է ու սպասում է գարնանը նոր արշաւանք կազմելու, իր անհանգիստ հոգուն փոթորկի մէջ հանգստացնելու, ասում է նրա հեռանալուց յետոյ «Դուն դահեր կը



տապալիս, բայց գահերը պահպանել չես կրնար: Ատիկա ես... ես: Կայսրը... ես» (96 եր.):

Եւ իրօք կեանքում կայսրները դրանք են, դրանք, որ միայն ժամանակին անյայտանալ, ժամանակին հիւանդանալ, ժամանակին սողալ ու շողոքորթել գիտեն: Եւ ահա թէ ինչ ձևով են մօտենում կեանքում իրենց նպատակին, իրենց տենչացածին («Զգուշ կը մօտենա գահի պատւանդանին, կընայի շուրջը, աստիճան աստիճան կը բարձրանա, կը շտկէ տապալած գահը, կը յարդարէ: Իր ծռած զիրքովը կը նայի ետ, կը գիտէ մուտքերը, որ տեսնող չըլլա, կամացուկ մը կը նստի գահին եզերքը ու հաճոյքէն ձեռքերը իրար շփելով կը ծիծաղի») «Հի... հի... հի... հի...» (96 եր.)

Ուշք դարձրէք հեղինակի նուրբ հոգեբանական դիտողութեանը, թէ որքան բնորոշ է արտայայտում «Կեանքի կայսր» ողջ էութիւնը: Այդ հոգին իր բոլոր գործողութիւններում «զգուշ է մօտենում գահին» և ոչ թէ հերոս հոգու նման պարզ ասում է, այն էլ արտօրից նոր ազատուած և Պօլիս վերադարձող, ուր միայն խարտաւանանքների անվերջ կծիկներն են գործ տեսնում «կերթամ կայսր դառնալու» (67 եր.): Այդպիսիները միայն «տապալած գահեր»-ի են տիրանում, այն էլ վախվխելով, «ետ նայելով մուտքերն գիտելով, որ տեսնող չլինի» ռքքան զգուշութիւն, խեղճութիւն, վախկոտութիւն. փոքրիկ, գաճաճ հոգու: Եւ ռքտեղ կարող է նայել այնպիսի խեղճ միջոցներով խեղճ դրութեամբ գահ բարձրացողը. անշուշտ միայն «գահի եզերքը» որտեղից ցած զլորուելը վայրկեանի գործ է, ռքքան շտեղծ-եղբը, իր գծում հոգուն էլ բաւական է:

Բայց ինչ թունոտ է նրա ծաղրը բոլոր ըմբոստ հոգիների, կեանքի մէջ «ստեղծողների հասցէին»:

Եթէ «նոր տաճար» շինող վանահօրը չհասկացող վանականները «ցորէն, պարէն»-ով զոհանալ գիտեն և նրան խելագար կյայտարարեն, ապա դարմանալի չէ, որ «արուներին» ծաղրող ներքինին թունոտ հեղնանքի դիւական քրքիջն արձակէ կուր լիոնները բարձրացող Օհան Գուրգէնի հասցէին:

«Հի... հի... հի... հի...» ռքքան թունոտ, ռքքան դառն է այս քրքիջը ներքինու շրթունքներին ու որքան սազում է նրա առնականութիւնից զրկուած դէմքին:

■ Եւ միթէ «Ելքի լիոնները» բարձրացողների գնահատութիւնն այս քրքիջն է ու միթէ կեանքը աւելին չունի տալու իր ստեղծողների, իրեն դէմ յաւիտենական ու անհաշտ մարտը յայտարարողների համար:

Հեղինակը այս դիւական քրքիջով է փակում դրաման. արդեօք նրա համար, որ ուզում է պնդել մէկ էլ ու մէկ էլ, թէ կեանքը դառն հեղնանքի է միայն արժանի: